ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՅՈՒՐԻ ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 7-րդ փողոցը և դրա շարունակություն համարվող հատվածը (սկսվում է Գրիգոր Աղաբաբյան փողոցից, հասնում՝ Դավթաշենի 7-րդ փողոցի հ.50 հասցեի հարակից տարածք) անվանակոչել հայ կինոռեժիսոր, սցենարիստ, նկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Յուրի Երզնկյանի անվամբ՝ «Յուրի Երզնկյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՅՈՒՐԻ ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ կինոռեժիսոր, սցենարիստ, նկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ **Յուրի Երզնկյանը** ծնվել է 1922թ. դեկտեմբերի 19-ին, Թբիլիսիում:

1934-1942թթ. եղել է Երևանի առաջին պետթատրոնի (այժմ՝ Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն) նկարիչը: 1940-1941թթ. փորձաշրջան է անցել Մոսկվայի Ե.Վախթանգովի դրամատիկական թատրոնում: 1941-1943թթ. եղել է Երևանի «Սատիրայի պատուհանի» ռեժիսորը: 1943թ.-ից աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում որպես նկարիչ, ապա՝ ռեժիսոր: 1946-1947թթ. սովորել է Մոսկվայի ռեժիսորական դասընթացներում: 1949թ. ավարտել է Մոսկվայի կինոինստիտուտի բարձրագույն ռեժիսորական դասընթացը, 1952թ.՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի թատերագիտական ֆակուլտետը: Ռեժիսորական աշխատանքն սկսել է 1953թ.-ից՝ նկարահանելով վավերագրական ֆիլմեր: Նրա նկարած հայտնի ֆիլմերից են՝ «Հասցեատիրոջ որոնումները» (1955թ., Ամասի Մարտիրոսյանի հետ), «Հովազաձորի գերիները» (1957թ.), «Առաջին սիրո երգը» (1958թ., Լաերտ Վաղարշյանի հետ), «Իմ ընկերոջ մասին» (1959թ.), «Դժվար անցում» (1964թ.), «Ապրում էր մարդը» (1968թ.), «Կամուրջներ մոռացության վրայով» (1969թ.) և այլն: Էկրանավորել է «Խաթաբալա» (1971թ.), «Հայկական որմնանկարներ» (ըստ Է.Հովհաննիսյանի բալետների, 1972թ.), «Այս կարմիր, կանաչ աշխարհը» (ըստ Ա.Բակունցի «Միրհավ»-ի, 1975թ.) և այլ ժապավեններ: Ղեկավարել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեժիսորական ֆալուլտետը (1982թ.-ից՝ պրոֆեսոր): 1975թ. արժանացել է Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման:

Յուրի Երզնկյանը մահացել է 1996թ. Մոսկվայում, հուղարկավորված է Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 7-րդ փողոցն անվանակոչել հայ կինոռեժիսոր, սցենարիստ, նկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Յուրի Երզնկյանի անվամբ՝ «Յուրի Երզնկյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**